Զարգացման խանգարումների հարցերով նահանգային խորհրդի (SCDD) առաքելությունն է՝ երաշխավորել, որ մտավոր/ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անհատները և նրանց ընտանիքները ստանան այն տեղեկատվությունը, ծառայությունները և աջակցությունը, որն անհրաժեշտ է իրենց՝ Կալիֆորնիա նահանգում գտնվող իրենց ընտրած համայնքում ինքնաբավ և անկախ կյանքով ապրելու համար:

Զարգացման խանգարումների հարցերով նահանգային խորհուրդն (State Council on Developmental Disabilities, SCDD) երախտապարտ է, որ ձեզանից շատերն իրենց մասնակցությունը ցուցաբերեցին իր Նահանգային պլանի հետազոտական հարցմանը: Ընդհանուր առմամբ առցանց և համայնքային վերապատրաստումների ու միջոցառումների միջոցով ստացվել է 6,329 պատասխան (հարցումը կատարվել է բացի անգլերենից ևս 17 տարբեր լեզուներով): Հարցման բոլոր արդյունքները գրանցվել են Խորհրդի տվյալների շտեմարանում (Qualtrics) և ենթարկվել վերլուծության՝ այն խնդիրները որոշարկելու նպատակով, որ ամենակարևոր նշանակությունն ունեն Կալիֆորնիայում բնակվող մտավոր/ֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող մարդկանց, նրանց ընտանիքների և այլոց համար:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ մարդկանց ամենաշատը մտահոգում են զբաղվածության, բնակարանով ապահովման, կրթության և առողջապահության/անվտանգության ապահովման ոլորտի հարցերը: Մտավոր/ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդիկ նշել են, որ իրենց համար ամենակարևորը զբաղվածության խնդիրն է: Մեր աշխատակիցները հարցում են կատարել 1,530 իսպանա/լատինախոս մարդկանց շրջանում, որոնցից 496 հոգի միայն իսպանախոս են եղել:

Իսպանախոս մարդկանց համար ամենամտահոգիչ խնդիրն եղել է կրթությունը:

Խորհրդի գործունեությանը ներկայացվող դաշնային պահանջների համաձայն՝ առաջ քաշված նպատակները բաժանվել են երեք (3) ոլորտների՝ սեփական իրավունքների պաշտպանություն, համակարգերի փոփոխություն/շահերի պաշտպանություն և կարողությունների զարգացում/շահերի պաշտպանություն: Նահանգային պլանի նպատակներն ուղենշելու համար մեր աշխատակիցները վերլուծություններ կատարեցին այն աշխատանքի բնագավառում, որ Կալիֆորնիայի բնակիչները խնդրել էին Խորհրդին անել: Այդ աշխատանքը ներառում էր վերապատրաստումը, տեխնիկական աջակցությունը, հատուկ միջոցառումներն ու նախագծերն, ինչպես նաև տեղեկատվությամբ և ռեսուրսներով ապահովումը: Քաղաքականության, հատուկ նախագծերի, համակարգային փոփոխության աշխատանքի համար Հանձնաժողովի անդամները որոշեցին իրենց ուշադրությունը կենտրոնացնել զբաղվածության, կրթական, բնակարանով ապահովման և առողջապահության/անվտանգության ոլորտների վրա: Վերապատրաստման և տեխնիկական աջակցության համար Խորհրդի աշխատակազմը կտրամադրի տեղեկատվություն, վերապատրաստում և ռեսուրսներ այն բոլոր ոլորտներում, որոնք կարևոր են հաշմանդամություն ունեցող մարդկանց և նրանց ընտանիքների համար:

Այն գործողությունների թիվը, որ Խորհուրդը պլանավորում է կատարել, ինչպես նաև այն մարդկանց թիվը, որ նա պլանավորել է աջակցություն տրամադրել, հիմնված են 1) վերջին հինգ (5) տարվա ընթացքում արված աշխատանքի, ներառյալ կատարված գործողությունների և ուսումնասիրված մարդկանց թվի, 2) Խորհրդի անձնակազմի հնարավորությունների ու առկա ռեսուրսների և 3) Խորհրդի տարեկան աշխատանքային պլանի մշակման ու իրագործման վրա: Նահանգային պլանի նպատակների յուրաքանչյուր նախագծում բերված թվերը կբաշխվեն գալիք հինգ (5) տարիների (2022-2026թթ.) Նահանգային պլանի ժամանակաշրջանում:

Ելնելով հարցման արդյունքներից (հազարավոր մարդկանց մեկնաբանություններով հանդերձ), ինչպես նաև Խորհրդի անձնակազմի կատարած հետազոտության արդյունքներից՝ Խորհրդի նահանգային պլանի կազմման հանձնաժողովը մշակել է իր առարկած Նահանգային պլանը: Այժմ Խորհուրդը հանրային ուշադրությանն է ներկայացնում իր առաջարկած 2022-2026 թ. Կալիֆորնիայի նահանգային պլանը և ակնկալում ձեր դիտարկումները: Հանրության դիտարկումները կարող են ներկայացվել 45 օրվա ընթացքում:

Առաջարկվող 2022-26թթ. նահանգային պլանը

Նպատակ 1. Սեփական իրավունքների պաշտպանություն

Խորհուրդը կքաջալերի մտավոր/ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդկանց դառնալու սեփական իրավունքները պաշտպանելու ունակ, իրենց նման հաշմանդամություն ունեցող մարդկանց դաստիարակ և համայնքում որպես առաջավար հանդես եկող անհատներ:

Գաղափար 1

Խորհուրդը կապահովի տեղեկատվությամբ, ռեսուրսներով և կկազմակերպի 125 վերապատրաստման ծրագիր՝ աջակցելով սեփական իրավունքների պաշտպանությամբ հանդես եկող 1,250 մարդու հետևյալ հարցերում.

1) որոշարկելու և բացահայտելու այն աջակցության և ծառայության տեսակները, որոնց կարիքը նրանք զգում են,
2) դառնալու և հանդես գալու որպես հաշմանդամություն ունեցող մարդկանց դաստիարակ և խորհրդատու, ինչպես նաև
3) զարգացնելու հմտություններ և հնարավորություններ՝ որպես ակտիվիստներ ներգրավվելու այնպիսի հարցերում, որոնք կարևոր են նրանց և նրանց ընտանիքների համար:

Գաղափար 2

Խորհուրդը կաջակցի սեփական իրավունքների պաշտպանության ջատագովներին համապատասխան հանրույթներում՝ տրամադրելով օժանդակություն, շոշափելի աջակցություն և որպես սեփական իրավունքների պաշտպան/նախաձեռնող անձ հանդես գալու հնարավորություններ սեփական անձի իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող առնվազն 1 նահանգային և 12 տարածաշրջանային մարմինների միջոցով՝ հասցնելով ներգրավված մարդկանց թիվը 6,000 հոգու:

Նպատակ 2. Համակարգերի փոփոխություն/շահերի պաշտպանություն

Խորհուրդը կաշխատի ընտանիքների/սեփական իրավունքների պաշտպանների և այլոց հետ համագործակցելով՝ պաշտպանելու և ամրապնդելու համար քաղաքացիական իրավունքներն ու բարելավելու համայնքային համակարգերը, որպեսզի դրանք լինեն առավել ընդգրկուն և սատարող մտավոր/ֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող մարդկանց և նրանց ընտանիքների նկատմամբ:

Գաղափար 1

Խորհուրդը կմշակի, կբարելավի և/կամ կփոխի 30 գործունեության ուղղվածություն, 15 քաղաքական ուղեգիծ և 10 կանոնակարգ (կամ ուղեցույց) և/կամ օրենքներ տարածաշրջանային կենտրոնների, համայնքային ծառայությունների և կառավարական մարմինների համակարգերում: Այս աշխատանքն ընդգրկելու է զբաղվածության, կրթության, բնակարանով ապահովման և առողջապահության/ անվտանգության ոլորտներն այնպես, որ դա լինի ի շահ մտավոր/ֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող մարդկանց և ի պաշտպանություն նրանց քաղաքացիական իրավունքների, ինչպես նաև կնպաստի նրանց լիարժեք ընդգրկմանը և/կամ կապահովի լրացուցիչ աջակցությամբ և ծառայություններով՝ շոշափելի կերպով բարելավելով նրանց կյանքի որակը:

Գաղափար 2

Խորհուրդը կզբաղվի զբաղվածության, կրթական, բնակարանով ապահովման և առողջապահության/անվտանգության ոլորտի 20 տարածաշրջանային և 5 նահանգային նորարարական/հատուկ նախագծերով և/կամ միջոցառումներով՝ նպատակ ունենալով.

1) քաջալերելու 5,000 մարդու (ընտանիքներ, սեփական իրավունքների պաշտպանությամբ հանդես եկող անհատներ և այլոք) ջանքեր գործադրելու համակարգային փոփոխությունների գործում և ապահովելու նրանց տեղեկատվությամբ, հմտություններով և/կամ աջակցությամբ, որպեսզի նրանք զարգացնեն շահերի արդյունավետ պաշտպան դառնալու իրենց ունակությունները և/կամ
2) ավելացնելու ծառայությունները, որպեսզի բարելավվի մտավոր/ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդկանց և նրանց ընտանիքներին ցուցաբերվող աջակցությունը:

Գաղափար 3

Խորհուրդը, համագործակցելով Կալիֆորնիայի չորս (4) դաշնային գործընկերների (մեկ Պաշտպանության և քարոզչության հարցերով գործակալության և երեք Զարգացման խանգարումների դեպքում առաջընթացի հասնելու համալսարանական կենտրոնների) հետ, կգնահատի կոնկրետ տիպի ծառայությունների մատուցման համակարգը (համակարգերը), որը (որոնք) իր (իրենց) ազդեցությունն ունի (ունեն) մտավոր/ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդկանց վրա՝ ընտրելով ուշադրության արժանի որևէ ոլորտ Նահանգային պլանում, օրինակ՝ կրթական, զբաղվածության, բնակարանով ապահովման, առողջապահական կամ անվտանգության ապահովման ոլորտներից մեկը, և հաշվետվություն կազմել, թե կոնկրետ ծառայողական համակարգը (համակարգերը) ինչպես է (են) սպասարկում մտավոր/ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդկանց (ներառյալ թե՛ այն մարդկանց, որոնց սպասարկել է Տարածաշրջանային կենտրոնի համակարգը, թե՛ այն մարդկանց, որոնք չեն ընդգրկվել այդ ցանկում): Հաշվետվությունը կարող է ներառել համակարգի (համակարգերի) տրամադրած ծառայությունների բացթողումների, Զարգացման խանգարումների մասին ակտի առաջ քաշած նպատակներին հասնելու համար համակարգը (համակարգերը) բարելավելու մասին առաջարկությունների, ինչպես նաև քաղաքական ուղեգծի և պրակտիկայի մեջ փոփոխություններին հետամուտ լինելու հարցերը: Համագործակցության արդյունքը կլինի այն, որ կունենանք 2 հաշվետվություն, քաղաքական ուղեգծի կամ պրակտիկայի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ 6 առաջարկություն, ինչպես նաև 2 փոփոխություն քաղաքական ուղեգծի և պրակտիկայի մեջ:

Նպատակ 3. Կարողությունների զարգացում/շահերի պաշտպանություն

Խորհուրդը կհամագործակցի և կխրախուսի մտավոր/ֆիզիկական հաշմանդամություն ունեցող ավելի շատ մարդկանց և նրանց ընտանիքներին, որպեսզի նրանք տեղեկացված լինեն իրենց իրավունքների մասին և կարողանան հանդես գալ ի պաշտպանություն իրենց շահերի և ստանալ համապատասխան աջակցություն ու ծառայություններ:

Գաղափար 1

Խորհուրդն ամբողջ նահանգում կկազմակերպի իրական, առցանց և/կամ անհատական վերապատրաստման կուրսեր (դրանք կարող են անցկացվել թե՛ մեր անձնակազմի, թե՛ նույնպես զարգացման խանգարումներ ունեցող մարդկանց կողմից, ինչպես նաև կարող են լինել համագործակցային հիմունքներով) 60,000 մարդու համար (ընտանիքի անդամներ/սեփական իրավունքների պաշտպանության ջատագովներ/այլոք), ինչպես նաև տեխնիկական օժանդակություն կտրամադրի/սեփական շահերի պաշտպանության դասընթացներ կանցկացնի 50,000 հոգու համար՝ օժանդակելով և ռեսուրսներ տրամադրելով, որոնց օգնությամբ հնարավոր կլինի որոշարկել և ձեռք բերել այն աջակցությունն ու ծառայությունները, որոնք կօգնեն մտավոր/ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդկանց վարելու առավել ապահով և առողջ կենսակերպ:

Գաղափար 2

Խորհուրդը ներգրավված կլինի 100 նախագծում և միջոցառումների մեջ, որոնք կառնչվեն զբաղվածության, կրթության, բնակարանով ապահովման, առողջապահական/անվտանգության ապահովման ոլորտներին, ինչպես նաև կկարողանա զբաղվել 25,000-ի հասնող մարդկանց (ընտանիքի անդամներ/սեփական իրավունքների պաշտպանության ջատագովներ/այլք) նոր ի հայտ եկող խնդիրներով՝ տրամադրելով տեղեկատվություն և ռեսուրսներ նրանց տեղեկացվածությունն ամրապնդելու և նրանց համար կարևոր նշանակություն ունեցող աջակցությունն ու ծառայությունները ստանալու հնարավորությունները մեծացնելու համար:

Գաղափար 3

Անվճար և պատշաճ հանրային կրթություն ստանալու հարցում անհավասարությունները նվազեցնելու նպատակով Խորհուրդը կհամագործակցի 5,000 իսպանախոս ընտանիքի/սեփական իրավունքների պաշտպանության ջատագովների հետ ամբողջ նահանգում՝ հանդես գալով ի շահ և ավելացնելով հատուկ կրթական ծառայությունների քանակը և տեսակը/որակը, որ մատուցվում է նրանց տեղի կրթական հաստատությունների կողմից:

Խնդրում ենք կիսվել ձեր մեկնաբանություններով